ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 515 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 788-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն պատերազմից տուժած Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության քաղաքացիներին» ծրագրի մասին» N 788-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետում «607,320,360 դրամ» բառերը փոխարինել «615,320,360 դրամ» բառերով.

2) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Թերմո-Ար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02566649) 2022 թվականի մայիսի 24-ին կնքված N Infra/Works 01-2022 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման կաթսաների և համակարգերի սարքավորումների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,740,363 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Թերմո-Ար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02566649) 2022 թվականի մայիսի 24-ին կնքված N Infra/Works 02-2022 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման կաթսաների և համակարգերի սարքավորումների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 4,457,755 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

14.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ